հոյակապ վանքերով և եկեղեցիներով ճոխացած էին և որոնց ուրացումը կարելի չէ, անտարակոյս պիտի փափաքէին վայելելու Ցորդանանու օրհնութիւնները։ Մենք վերև յիշատակեցինք Յովհաննէս Մոսքոսի մէկ վկայութիւնը որուն համաձայն կը հաստատուէր թէ Բեթաբրայի այրերուն մէջ հաստատուած էին անապատականներ՝ և անոնցմէ մին Յովհաննէս՝ իր բնակած այրը փոխակերպած է եկեղեցիի՝ անուանելով զայն Ս. Յովհաննէս Մկրտիչ։ Ինչպէս աջ ափունքին՝ նոյնպէս ձախ ափանց գետեզերքը զարդարուած էր այլևայլ ազգաց վանքերով և եկեղեցիներով։ Մեր հին մատենագրութեան մէջ Մովսէս Կաղանկայտուացի առաջին անգամ կը յիշատակէ հայկական վանք մը և եկեղեցի մը Յորդանանի քով (Տե՛ս Պատմ. Աղուանից, էջ 423) «. . . ուր Փրկիչն մկրտեցաւ, յորում եկեղեցի սագաշեն խաչանման յարմարեալ՝ 80 կանգուն երկայն 80 լայն, երեք սեղան խորհրդոյ, եւ պատարագ մատչի . . .». ասոնք ականատես ուխտաւորի խօսքերն են. եկեղեցին շինուած է որբանաձև, խաչանման և երեք սեղաններով։ Ի՞նչպէս պէտք է ճշդենք նոյն եկեղեցւոյ շինութեան թուականը։ Քաղկեդոնական խլրտումներուն պատճառաւ Երուսաղէմի հայ Միաբանութեան մէկ կարևոր մասը երբ Ս. Տեղերէն ցրուեցաւ, կարևոր հատուած մ'ալ հաստատուեցաւ Յորդանանի եզերքը։ Անաստաս հայազգին իր Վանօրէից Ցուցակին ներածական մասին մէջ կը գրէ. «. . . եւ նոցա ոչ կարացեալ համբերել՝ թողին զտեղիս իւրեանց. և ԺԵ. վանք միայն մնացին. և կիսմ ի լերին Զիրեանաց եւ այլմ մերձ ի Բեթղեհեմ, եւ Սիւնական (Սինէական) կրօնաւորմ, եւ ի յեզր սուրբ գետոյն Յորդանանու, եւ ի լերինն Փորձութեան, յԱնապատ Փրկչին. եւ ի Թափորական լեառն, եւ ի Հերմոն՝ հանդէպ Թափորայ, եւ այլ եւս ի նոյն կողմանս Տիբերական ծովուն . . .»։ Եթէ, ըստ Կաղանկայտուացիին յիշատակարանին, չենք կրնար աւելի հնագոյն թուականի մը տանիլ Յորդանանու հայկական վանքը, վստահաբար պիտի ընդունինք թէ Է. դարու կիսուն քաղկեդոնական խնդրով Երուսաղէմէն ցրուող հայ կրօնաւորները Յորդանանու եզերքը չինած պէտք է ըլլան հայկական վանք մը։ Այս հայկական հաստատութեան մասին Ս. Տեղեաց արձանագրութեանց մէջ յիշատակարան չունինք և այժմ աւանդութիւնն ալ մոռցուած է։ Միայն մէկ դար առաջ 1813ին Ցունաց հետ տեղի ունեցած դատավարութեանց առթիւ Պոլսի